

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/4

16 ապրիլի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Պարզև Մաթևոսյանի գրությամբ բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի» ՀՏ 01.03.2013թ. թիվ 2120242 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Պարզև Մաթևոսյանի բողոքում մասնավորապես նշված է.

համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-243-Ն օրենքի (Ընդունված 2012թ-ի դեկտեմբերի 19-ին) 17-րդ հոդվածի՝ եթե հանրային սննդի գործունեության համար արտոնագիրը տրամադրվել է մինչև 2013թ-ի հունվարի 1-ը, և այդ արտոնագիրը վերաբերում է 2013թ-ի որևէ ժամանակահատվածի, ապա 2013թ-ի հունվարի 1-ից Օրենքի թիվ 8-ի հավելվածի 14-րդ կետի 1.2-րդ և 2-րդ ենթակետերով սահմանված գործակիցների կիրառման արդյունքում լրացուցիչ վճարման ենթակա արտոնագրային վճարը վճարվում է մինչև 2013թ-ի հունվարի 31-ը ներառյալ, որից հետևում է, որ Ա/Ձ Պարզև Մաթևոսյանը հունվար ամսվա համար ստացած արտոնագրի ելակետային տվյալի մեծությունը պակաս ցույց չի տվել, այլ ուղղակի չի վճարել լրացուցիչ վճարման ենթակա գումարը: Հետևաբար ստուգման ակտում նշված՝ հունվար ամսվա համար հաշվարկված 90.000 դրամ տուգանքը չպետք է կիրառվի:

Տեղեկացնում ենք նաև, որ 2013թ-ի փետրվար ամսվա ընթացքում Ա/Ձ Պարզև Մաթևոսյանն իրականացրել է հանրային սննդի գործունեություն, սակայն հետապար և/կամ անհատական ցուցադրություններ չի ունեցել, հետևաբար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված թիվ 8-ի 14-րդ կետի 2-րդ ենթակետում եշված 5 գործակիցը չպետք է կիրառվի:

Հաշվի առնելով վերը եշված փաստերը, խնդրում եմ Ձեզ չեղյալ համարել թիվ 2120242 ստուգման ակտում նշված՝ հունվար ամսվա համար հաշվարկված 90.000 դրամ տուգանքը և փետրվար ամսվա տուգանքի հաշվարկման համար կիրառված 5 գործակիցը, որի արդյունքում թիվ 2120242 ստուգման ակտով առաջադրված պարտավորության չափը կնվազի 1.170.000 դրամով:

«ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Պարզև Մաթևոսյանի ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի» ՀՏ պետի 15.02.2013թ. թիվ 2120242 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Պարզև Մաթևոսյանի մոտ կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 01.03.2013թ-ին կազմվել է թիվ 2120242 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.547.100 դրամ: Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ա/Ձ Պարզև Մաթևոսյանը Պարոնյան 8 հասցեում իրականացնում է հանրային սննդի գործունեություն հետապար և անհատական ցուցադրումներով: Ա/Ձ-ն

Կենտրոնի ՀՏ-ից ունի ստացած արտոնագիր 135000 դրամ արժողությամբ հունվար ամիսի համար, սակայն չի կիրառել <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, այն է հետստապար և անհատական կամ համույթային համանման այլ ցուցադրումներ ունեցող հանրային սննդի գործունեություն իրականացնող վայրի համար կիրառվում է 5 գործակից (նախկինում կիրառել է 3 գործակից): Իսկ փոետրվար ամսվա համար չի ստացել արտոնագիր:

<Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, սույն օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակի մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար արտոնագրում նշված ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է տվյալ հունվար ամսվա համար պակաս վճարված արտոնագրային վճարը՝ 90000 (45000\*5-135000) դրամ և հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույս խախտումը թույլ տալու դեպքում տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի գումարի չափով՝ 90000 դրամ:

Հիմք ընդունելով <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ստուգման ակտով արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 1.547.100 դրամ:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտը կազմվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտմամբ: Մասնավորապես, ստուգման ակտի նախագիծը կազմվել է 25.02.2013 թ-ին և նույն օրն այն փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Ա/Ձ Պարգև Մաթևոսյանին: Որից հետո 01.03.2013թ-ին, այսինքն՝ ակտի նախագիծը կազմելուց հետո չորրորդ օրը, կազմվել է ստուգման ակտը: Արդյունքում խախտվել է տնտեսավարող սուբյեկտին

ակտի նախագծը ուսումնասիրելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետը:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի <ժ> կետի, վարչական ակտը պետք է պարունակի ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

Ա/Ձ Պարզև Մաթևոսյանին ուղարկված ստուգման ակտի օրինակի ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն կնիքված չէ ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքով: Այսինքն, քննարկվող դեպքում խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի <ժ> կետով սահմանված դրույթները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 01.03.2013թ. թիվ 2120242 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ